1845 ին : — Մանկն վերջ, իր բանկարժէք գիրքերն



ՁԵՌԱԳԻՐ ՔԻՔԱՊՃԸ ՄԱՐԳԱՐԻ

ու ձեռագրերը Հայ մը գնած է. իսկ գաւակն, և մեծագին վաճառած է արիզի Ազգ. Մատենադարանին : —

* * Ունեցած է 16 զաւակ — 4ը մեռած — որոնցմէ ՅԱՐՈՒԹԻՒՆ (մանչերուն երէցը) ծնած է Բերա : Նախ. կրթ. կ'ստանայ Գում Գաբու : Միջոց մը հօրը գործին կը հետեւի, յետոյ կը մտնէ Մր. Համլինի ամերիկեան վրժրն.ը (Պէպէք) ուր անգլ. կը սորվի և կը հմտանայ գիտութեանց, և ուրկէ ելլելուն ուսուցիչ կը կարգուի Սամաթիոյ դպրոցին. սակայն չհամակերպելով աջառութեանց՝ կը հրաժարի և Գուրու Զէշմէ Ամիրայի մը տուն տարի մը կը մնայ ուսուցչ. պաշտօնով : Հօրը մահուամբ, կը պարտաւորուի գրատան գործերն ըստանձնել և իրը ժառանգութիւն կ'ուզէ անոր անունը պահել իրը մականուն : Կը մնայ պետ ընտանիքին. հոգ կը տանի իր 2 քոյրերուն և 11 եղբարց կրթ. և այլ գործերուն: Կրասերագոյնը Բերովբէն կը դրկէ Բարիզ՝ Մուրատեան վրժրն. : — Ինքն է որ Գալֆաֆեան Յովսէփի պէս նոր կեանք կը մտցունէ գրավաճառութեան մէջ որ մինչեւ այն առեն տասանարդի դրութեամբ էր և հին գիրքերու առուտուրէն անդին չէր անցներ : Հեղինակներու հետ պայմանաւորուած՝ իր հաշուոյն գիրքեր տպել կու տայ և Ա. Հայկունիի ու Սվաճեանի թարգմանութիւնները լոյս կ'ընծայէ, զգուշանալով «հրատարակիչ» անունէն, տպագրիչներու բշնամութիւնը սրած չըլլալու դիտումով : Գարձեալ, իր երաշխաւորութեամբ լոյս տեսած է **Ժիլ Պլասը** բաժանորդագրութեամբ : — Կոչ կ'ուղղէ արհեստակիցներու, միանալու և օրինաւոր շահով ապրելու համար և հիմնադիրը կ'ըլլայ «Եղբարք Գրավաճառութեան Ընկ.եան» Պ. Սրապեանի և Յ. Գալֆաֆեանի հետ ընկերովի : — Հօրը նման, ինք ալ խառնուած է ազգ. գործերու և Էօլիւ Զրգմազ խանի իր սենեակը ժողովատեղի կը դարձունէ Օտեանի, Սվաճեանի, Նահապետի պէս մտաւորականներու, ուր կը ստղմնըլի մեր Սահմանադրութիւնը : — Ժողովրդ. քուէարկութիւնը տարածելու համար կանոնագիր մը կը կազմէ և յառաջ կը մղէ իր եղբայրները որոնք Այրբենարաններ ձեռուրնին՝ կիրակի օրեր դարիպ աղբրտանքներու խաները դեզերելով դաս կու տան : Այս ուղղութեամբ ան կը կազմէ «Անձնուէր Ընկ.»ը 1860 ին, որ ճիգաւորութեամբ ա՛յնքան օգտակար հանդիսացած է մերայնոց : Բայց «խաւարեալ»ները կը հակառակին և «Ասոնք ժողովուրդը **բոլոր** պիտի ընեն» ըսելով կ'սկսին խաներէն վտարել, ծեծել ու բշնամանել գիրենք : Մարգարեան չյուսահատիր. զիշերային ու կիրակնօրեայ դասեր կը հաստատէ ազգ. դպրոցներ, ու նոյն գործին ցվերջ նեցուկ կ'ունենայ Բ. Ղազարոսեանը, որ հիմնադիրին

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ